

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ (ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ)

Ուժի մեջ է 2014թ. նոյեմբերի 19-ից

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդներին մատուցվող բանկային երաշխիքների, փաստաթղթային ակրեդիտիվների, ֆակտորինգի և ինկասո գործառնությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սույն սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սույն սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի կամ պայմանագրի ստորագրումը հաստատում է սույն սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սույն սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել սույն սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար սույն սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

1. ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐ	
Բանկային երաշխիքի (ԲԵ) տրամադրում	
1.1. ՀՀ տարածքում գործող բենեֆիցիարի օգտին տրամադրվող ԲԵ	
1.1.1. Դրամական միջոցների գրավով ապահովված ԲԵ տրամադրում	մինչև 181 օր մարման ժամկետով երաշխիքներ՝ 0.6% միանվագ ԲԵ գումարից 181-366 օր մարման ժամկետով երաշխիքներ՝ 1% միանվագ ԲԵ գումարից 366 օր և ավել մարման ժամկետով երաշխիքներ՝ 1% տարեկան ԲԵ գումարից - նվազագույնը՝ 10 000 ՀՀ դրամ - առավելագույնը՝ 250 000 ՀՀ դրամ
1.1.2. Այլ գրավով ապահովված ԲԵ տրամադրում	մրցույթի մասնակցության կամ հայտի ապահովման երաշխիք՝ 1% միանվագ ԲԵ գումարից, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ մինչև 366 օր մարման ժամկետով այլ երաշխիքներ՝ 1-2% միանվագ ԲԵ գումարից 366 օր և ավել մարման ժամկետով այլ երաշխիքներ՝ տարեկան 2-3% ԲԵ գումարից - նվազագույնը՝ 20 000 ՀՀ դրամ
1.1.3. Այլ բանկի կողմից տրամադրված հանդիպակաց երաշխիքով ապահովված երաշխիքի տրամադրում	պայմանագրային
1.2. ՀՀ տարածքից դուրս գործող բենեֆիցիարի օգտին տրամադրվող ԲԵ	
1.2.1. Դրամական միջոցների գրավով ապահովված բանկային երաշխիքի/հանդիպակաց երաշխիքի տրամադրում	տարեկան 1% ԲԵ գումարից, նվազագույնը 35 000 ՀՀ դրամ
1.2.2. Այլ գրավով ապահովված բանկային երաշխիքի/հանդիպակաց երաշխիքի տրամադրում	տարեկան 2-4% ԲԵ գումարից, նվազագույնը 40 000 ՀՀ դրամ
1.2.3. Բանկի կողմից տրամադրված հանդիպակաց երաշխիքով ապահովված երաշխիքի տրամադրում այլ բանկի կողմից	համաձայն միջնորդ բանկի/բանկերի սակագների
1.2.4. Միջնորդ բանկերի միջնորդավճարների վճարման նպատակով հաճախորդի կողմից դեպոզիտային գումար	պայմանագրային
1.3. Այլ գործառնություններ	
1.3.1. Երաշխիքի պայմանի փոփոխություն	30,000 ՀՀ դրամ + միջնորդ բանկի ծախսեր - գումարի ավելացման կամ ժամկետի երկարաձգման դեպքում փոփոխությունների դիմաց լրացուցիչ կգանձվի համամասնորեն հաշվարկված թողարկման միջնորդավճար՝ առանց նվազագույն սահմանաչափի կիրառման
1.3.2. Երաշխիքի գումարի վճարում պահանջի դիմաց	Երաշխիքի պահանջվող գումարի 0.5%, նվազագույնը 60,000 ՀՀ դրամ
1.3.3. Երաշխիքի նամակի SWIFT հաղորդագրության փոխանցում այլ բանկին	25 000 ՀՀ դրամ
1.4. Այլ բանկի կողմից տրամադրված ԲԵ սպասարկում	
1.4.1. Երաշխիքի ծանուցում	30,000 ՀՀ դրամ
1.4.2. Երաշխիքի փոփոխության ծանուցում	15,000 ՀՀ դրամ
1.4.3. Երաշխիքի շրջանակներում վճարման պահանջի կազմում	20,000 ՀՀ դրամ
1.5. Լրացուցիչ պայմաններ	
- Երաշխիքը տրամադրվում է ՀՀ դրամով և արտարժույթով	
- Գյուղատնտեսական նշանակության երկարաժամկետ ծրագրերի դեպքում ԲԵ տրամադրման սակագինը որոշվում է պայմանագրային հիմունքներով	
- Երաշխիքի տրամադրման պահին գանձվում է երաշխիքի պայմանագրային ամբողջ ժամկետի տոկոսագումարը, որն անկախ երաշխիքի գործողության փաստացի տևողությունից, ենթակա չէ վերահաշվարկման և վերադարձման	
- Սույն սակագները տարածվում են նաև Պահուստային ակրեդիտիվների թողարկման գործարքների վրա	

2. ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԱՎՐԵԴԻՏԻՎՆԵՐ	
Ներմուծման փաստաթղթային ակրեդիտիվ (ՆՓԱ)	
2.1. ՆՓԱ թողարկում	
2.1.1. Դրամական միջոցների լրիվ ծածկույթով ապահովված ՆՓԱ թողարկում	ՆՓԱ գումարի 0.15%,

2.1.2. Առանց դրամական միջոցների ծածկույթի կամ դրամական միջոցների մասնակի ծածկույթով ապահովված (այլ գրավի ապահովվածությամբ) ՆՓԱ թողարկում	նվազագույնը 40,000 ՀՀ դրամ ՆՓԱ գումարի 0.15% յուրաքանչյուր եռամսյակի համար, նվազագույնը 40,000 ՀՀ դրամ <i>(գանձվում է միանվագ՝ ակրեդիտիվի գործողության ամբողջ ժամկետի համար, իսկ ոչ լրիվ եռամսյակը համարվում է ամբողջ եռամսյակ)</i>
2.1.3. Ներմուծման առևտրային գործարքի ֆինանսավորում	համաձայն Բանկում գործող վարկավորման պայմանների
2.1.4. ՆՓԱ հաստատում այլ բանկի կողմից	համաձայն հաստատող բանկի/ բանկերի սակագների
2.2. ՆՓԱ պայմանի փոփոխություն	
2.2.1. ՆՓԱ պայմանի փոփոխություն	25,000 ՀՀ դրամ <i>- գումարի մեծացման կամ ժամկետի երկարաձգման դեպքում փոփոխությունների դիմաց կգանձվի համամասնորեն հաշվարկված թողարկման միջնորդավճար՝ առանց նվազագույն սահմանաչափի կիրառման</i>
2.2.2. ՆՓԱ չեղյալ հայտարարում	ՆՓԱ դադարեցումը համարվում է փոփոխություն
2.3. ՆՓԱ ներքո փաստաթղթերի ընդունում և ստուգում	
2.3.1. Անհամապատասխանության բացակայության դեպքում	25,000 ՀՀ դրամ փաստաթղթերի յուրաքանչյուր փաթեթի համար
2.3.2. Անհամապատասխանության առկայության դեպքում	35,000 ՀՀ դրամ անհամապատասխանություն պարունակող փաստաթղթերի յուրաքանչյուր փաթեթի համար
2.4. ՆՓԱ կատարում	
2.4.1. Ակրեդիտիվի գումարի վճարում	ՆՓԱ վճարվող գումարի 0.15%, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ
2.4.2. Հետաձգված վճարում	ակրեդիտիվի վճարման ենթակա գումարից 0.1% ամսական, նվազագույնը՝ 30 000 ՀՀ դրամ <i>(գանձվում է միանվագ՝ հետաձգված ամբողջ ժամկետի համար, իսկ ոչ լրիվ ամիսը համարվում է ամբողջ ամիս)</i>
Պահուստային ակրեդիտիվ (ՊԱ)	
2.5. ՊԱ թողարկում	
2.5.1. Դրամական միջոցների գրավով ապահովված ՊԱ թողարկում	տարեկան 1% ՊԱ գումարից, նվազագույնը 35 000 ՀՀ դրամ
2.5.2. Այլ գրավով ապահովված ՊԱ թողարկում	տարեկան 2-4% ՊԱ գումարից, նվազագույնը 40 000 ՀՀ դրամ
2.5.3. ՊԱ հաստատում այլ բանկի կողմից	համաձայն միջնորդ բանկի/ բանկերի սակագների
2.5.4. Միջնորդ բանկերի միջնորդավճարների վճարման նպատակով հաճախորդի կողմից դեպոնացվող գումար	պայմանագրային
2.6. Այլ գործառնություններ	
2.6.1. ՊԱ պայմանի փոփոխություն	30,000 ՀՀ դրամ + միջնորդ բանկի ծախսեր <i>- գումարի ավելացման կամ ժամկետի երկարաձգման դեպքում փոփոխությունների դիմաց լրացուցիչ կգանձվի համամասնորեն հաշվարկված թողարկման միջնորդավճար՝ առանց նվազագույն սահմանաչափի կիրառման</i>
2.6.2. ՊԱ չեղյալ հայտարարում	ՊԱ դադարեցումը համարվում է փոփոխություն
2.6.3. ՊԱ գումարի վճարում պահանջի դիմաց	ՊԱ պահանջվող գումարի 0.5%, նվազագույնը 60,000 ՀՀ դրամ
Արտահանման փաստաթղթային ակրեդիտիվ (ԱՓԱ)	
2.7. ԱՓԱ սպասարկում	
2.7.1. ԱՓԱ ծանուցում	25,000 ՀՀ դրամ
2.7.2. ԱՓԱ փոփոխության ծանուցում	
2.7.3. Այլ բանկի կողմից թողարկված ԱՓԱ հաստատում	
դրամական միջոցների լրիվ ծածկույթով ապահովված ԱՓԱ գումարի 0.15%, նվազագույնը 40,000 ՀՀ դրամ	

	առանց դրամական միջոցների ծածկույթի՝ ենթակա է համաձայնեցման թողարկող բանկին տրամադրված վարկային զծի ներքո
2.8. ԱՓԱ ներքո փաստաթղթերի ընդունում, ստուգում և առաքում	
2.8.1. Բանկը հանդիսանում է կատարող (հաստատող) բանկ	համաձայն ՆՓԱ համար սահմանված փաստաթղթերի ընդունման և ստուգման սակագների
2.8.2. Բանկը հանդիսանում է ծանուցող բանկ	35 000 ՀՀ դրամ յուրաքանչյուր փաթեթի համար
2.9. Այլ գործառնություններ	
2.9.1. ԱՓԱ ներքո ներկայացված փաստաթղթերի դիմաց ֆինանսավորում (հաճախորդի օգտին թողարկված մուրհակի զեղչում)	0.25% մուրհակի արժեքից, նվազագույնը 25,000 ՀՀ դրամ + համաձայնեցված վարկավորման տոկոսադրույք
Փաստաթղթային ակրեդիտիվի փոխանցում	
2.10. Ակրեդիտիվի փոխանցում	փոխանցվող ՓԱ գումարի 0.15%, նվազագույնը 35,000 ՀՀ դրամ
2.11. Լրացուցիչ պայմաններ	
- ՓԱ թողարկման միջնորդավճարի գանձումը կատարվում է միանվագ՝ ՓԱ բացման պահին	
- Ոչ լրիվ եռամսյակը համարվում է լրիվ եռամսյակ	
- Միջնորդ բանկերի միջնորդավճարները և փոստային ծախսերը գանձվում են լրացուցիչ	
3. ԻՆՎԱՍՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	
3.1. Արտահանման ինկաստ	
3.1.1. Ինկաստ հանձնարարագրի թողարկում	0.2%՝ հաշվարկված ինկաստի գումարից, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ
3.1.2. Ինկաստ հանձնարարագրի պայմանի փոփոխություն	15,000 ՀՀ դրամ (ինկաստի գումարի ավելացման դեպքում լրացուցիչ կգանձվի 0.2%՝ հաշվարկված գումարի ավելացված մասից)
3.1.3. Ավալի միջոցով երաշխավորված մուրհակի զեղչում	25,000 ՀՀ դրամ (համաձայնեցված տարեկան տոկոսադրույքի կիրառում)
3.2. Ներմուծման ինկաստ	
3.2.1. Ինկաստ հանձնարարագրի ծանուցում	0.2%՝ հաշվարկված ինկաստի գումարից, նվազագույնը 15,000 ՀՀ դրամ
3.2.2. Ինկաստ հանձնարարագրի պայմանի փոփոխության ծանուցում	15,000 ՀՀ դրամ (ինկաստի գումարի ավելացման դեպքում լրացուցիչ կգանձվի 0.2%՝ հաշվարկված գումարի ավելացված մասից)
3.2.3. Ակցեպտավորված մուրհակի երաշխավորում	3 - 6% տարեկան՝ հաշվարկված մուրհակի գումարից, նվազագույնը 35,000 ՀՀ դրամ
3.2.3. Ինկաստ ներկայացված, սակայն չվճարված փաստաթղթերի վերադարձ	35,000 ՀՀ դրամ
4. ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՅԱՆՁԻ ԶԻՋՄԱՆ ԴԻՄԱՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ (ՖԱԿՏՈՐԻՆԳ)	
Տեղական և արտահանման ֆակտորինգի սպասարկում	
4.1. Ֆակտորինգի սահմանաչափերի սահմանում	
4.1.1. Ֆակտորինգի առավելագույն սահմանաչափի սահմանում Հաճախորդի համար	0.15%, նվազագույնը 25 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 250 000 ՀՀ դրամ
4.1.2. Ֆակտորինգի առավելագույն սահմանաչափի վերանայում	15,000 ՀՀ դրամ
4.2. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում	
4.2.1. Ֆակտորինգի տրամադրման միջնորդավճար	Հ/Ա գումարի 0.3-2%, նվազագույնը 2 000 ՀՀ դրամ
4.2.2. Դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ)	տարեկան սկսած 14 %-ից
Ներմուծման ֆակտորինգի սպասարկում	
4.3. Ֆակտորինգի առավելագույն սահմանաչափի սահմանում Պարտապանի համար	50,000 ՀՀ դրամ
4.4. Ֆակտորինգի սահմանաչափի վերանայում	25,000 ՀՀ դրամ
4.5. Դեբիտորական պարտքի հավաքագրում	Հ/Ա գումարի 0.2%, նվազագույնը 25,000 ՀՀ դրամ